

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նայ արձակը անցյալ դարի 70-ական թվականներին նշանավորվեց գեղարվեստական բազմաթիվ նոր սրելծագործություններով: Այդ սերնդի ներկայացուցիչներից է Աղասի Այվազյանը: Նա գրականություն բերեց թեմայիկ բազմազանություն, հույզերի ու զգացմունքների մի նոր աշխարհ: Սրելծագործական ուղին նշանավորեց «Փառահամար» պատմվածաշարը (1973 թ.): Այնուհետև ընթերցողին հրամցրեց «Օբյեկտիվ 18», «Եռանկյունի», «Դիպլիպիպո», «Երկրի վրայի գրադմունքը» սրելծագործությունները: 2002 թ. լույս տեսավ «Պոեմ վասն շենքի ու շինության» վիպակը, որին նախորդել էր 1999 թ. լույս տեսած «Թալարոն» պիեսների ժողովածուն:

Ընդահանրապես գրողների սրելծագործության լեզուն կարելի է ուսումնասիրել տարբեր մոտեցումներով, ու նպատակը կարող է լինել տվյալ գրական երկի լեզվի քերականական, բառազիպական, երբեմն նույնիսկ հնչյունաբանական օրինաչափությունների պարզաբանումը: Մեզ հետաքրքրում է Ա. Այվազյանի սրելծագործությունների լեզվի շարահյուսական՝ մասնավորապես նախադասության կառուցվածքը: Դա կարևոր է հեղինակի անհատական ոճի առանձնահատկությունները բացահայտելիս:

Ընդհանրապես նախադասությունների կառուցվածքը պայմանավորված է նյութի բովանդակությամբ, խոսքային իրավիճակով, ինչպես նաև կիրառության ոլորտով: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հաճախ Այվազյանի տարբեր սրելծագործություններում կամ թեկուզ միևնույն սրելծագործության մեջ կարելի է հանդիպել տարբեր կառույցի ու փակերի նախադասությունների: Մեր լեզուն հարուստ է շարահյուսական հոմանիշներով, որոնք լայն հնարավորություն են տալիս գրողին ընկրելու այն անհրաժեշտը, որը տվյալ պահին ճիշտ է արտահայտում նրա նպատակադրումը: Նամագգային լեզվի տարբերը ընդհանուր են բոլոր հեղինակների համար, բայց այստեղ կարևորն այն է, թե հեղինակն ինչն է վերցնում լեզվից և ինչպես է դրանք օգտագործում իր սրելծագործության մեջ: Նախկապես նախադասությունների կառուցվածքի, նախադասության անդամների կապակցության և նախադասության ընկրության հարցում հեղինակը համեմատաբար ազատ է որոշ քերականական նորմերից և կարող է դրսևորել իր սրելծագործական հմտությունները, անհատականությունը: Նախադասության այս կամ այն կառույցի ընկրությունը գուր անհատական մտածողության հետևանք է և պայմանավորված է տվյալ հեղինակի ոճից:

Ա. Այվազյանի սրելծագործություններում պատմումը, եղևությունը, դեպքի, տեղի ունեցածի, նկարագրությունը թե՛ հեղինակային և թե՛ հերոսների խոսքում տեղի է ունենում պարզ, առավելապես ընդարձակ նախադասություններով: Նամառար՝ միայն գլխավոր անդամներ

րից կազմված նախադասությունները գործածվել են հարցնելու, հրամայելու, մարբերն արագ հաղորդելու, այսինքն՝ գրույցի ու վեճի դեպքում: Այդ պարզաբան համառոտ նախադասությունները հանդես են գալիս ընդարձակների հետ և չնչին մաս են կազմում Այվազյանի սրեղծագործություններում: Նկատելի է, որ հեղինակը նախապատվությունը տվել է հիմնականում դիմավոր բայով արտահայտված ստորոգյալին: Դա պայմանավորված է նրանով, որ բայ-ստորոգյալով նախադասությունները մարբերն ավելի արագ արտահայտելու հնարավորություն են տալիս, իսկ քանի որ խոնարհված բայն արտահայտում է նաև դիմայնություն, ուստի դերանուն ենթական գործածելու ոչ մի անհրաժեշտություն չկա՝ «Նավաբում եմ» /72, Պ¹/, «Խնդրում եմ» (76, Նեքիաթ)² և այլն: Ուշագրավ է, որ հարուկ անուններով ենթականերն առանց բացառության հանդես են եկել հեղինակի խոսքում և նման նախադասություններով հեղինակը նկարագրել է իր հերոսների հոգեվիճակը, փրամադրությունը՝ «Չիլիլին ժպտաց» /2 117/, «Առջկան լացեց» /Պ 107/, «Շրեքերը ծիծաղեց» /Պ 54/:

Ընդունված է պարզ ընդարձակ նախադասությունը մեկնաբանել որպես պարզ համառոտ նախադասության անդամների՝ ենթակայի ու ստորոգյալի ծավալում³: Այդ ծավալով՝ երկրորդական անդամները՝ գոյականի ու գոյականական անդամի լրացումները և բայի ու բայական անդամի լրացումները ընդարձակ նախադասություններում ունեն իրենց փառքեր արտահայտությունները, գործածության փառքեր ուղարկներն ու նպատակները: Այսպես, օրինակ՝ եթե Ա. Այվազյանի սրեղծագործությունները հարուստ են որոշիչ փառքեր արտահայտություններով, որոնք գործածվել են եւ՝ հեղինակի, եւ՝ հերոսների խոսքում, ապա նույնը չենք կարող ասել հարկացուցիչ և բացահայտչի մասին, քանի որ այս երկուսը հիմնականում հեղինակի խոսքում են գործածվել: Եւ դա այն պարզաբան, որ հեղինակն ինքն է նկարագրում առարկայի կամ երևույթի բացառությունը, ծագումն ու այս կամ այն բանին պատկանելը: Սրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ պիեսներում հարկացուցիչ և բացահայտիչ երկրորդական անդամներ համարյա չեն գործածվել: Եւ դա բնական է. չէ՞ որ պիեսում առօրյա խոսք է, երկխոսություն: Պարզվածքներում նույնպես այս լրացումները սակավ են գործածվել, չնայած որ այստեղ երկխոսությունները քիչ են: Այս առումով բացառություն է «Պոեմ վասն շենքի և շինության» վիպակը, ուր հեղինակը գործածել է նախադասության այս անդամները իր խոսքում: Սա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ այս սրեղծագործությունը արտահայտում է Այվազյանի մտորումներն ու վերաբերմունքը Նայասպանի առաջին Նանրապետության մասին. «Նարկապես մեզ՝ հայերիս համար մի նոր ճանապարհ է բացում ազատությունը» (57, Պ), «Մեր դարավոր իդը՝ անկախ, միացյալ Նայասպան ունենալու ծրագրի ուրվագիծը, երևակվում է» (57, Պ):

Բայական անդամի լրացումների գործածության դեպքերը, սակայն, որևէ չափանիշով չեն սահմանափակվում, դրանք հավասարապես գործածվել են ինչպես պիեսներում ու պարզվածքներում, այնպես էլ վիպակում:

1 Ա. Այվազյան, Պոեմ վասն շենքի և շինության, Եր., 2002: Այսուհետ այս գրքից բերված մեջբերումները կտրվեն փեղում:

2 Տե՛ս Ա. Այվազյան, Փառահամար, Նեքիաթ, Եր., 1973: Այսուհետ մեջբերումները կնշվեն փեղում:

3 Տե՛ս Մ. Աստրբյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., էջ 148: Տե՛ս նաև «Ժամանակակից հայոց լեզու», ՆՍԳԱ, հ. 3, Եր., էջ 177:

Ա. Այվազյանին բնորոշ է թվարկում, բազմակի անդամներով նախադասությունների վարպետ օգտագործում: Նախ է նշել, որ բազմակի անդամներն ունեն ցայտուն արքա-հայրական դեր. նրանց միջոցով ներկայացվում են ընդհանուր պարկերների մանրամասները: Ա. Այվազյանի սպեղծագործություններում կարելի է գտնել բազմակի՝ եւ՝ գլխավոր, եւ՝ երկրորդական անդամներով նախադասությունների ուշագրավ օրինակներ: Վիպական բազմակի ենթականերով է արքահայրվել Ալեքսանդր Թամանյանի բողոքի խոսքը. «Իմ ընկերները, իմ աշակերտները, հայ ճարտարապետները օտար լեզվով, օտար երկրից դիմում են ամբողջ կոմունիստական աշխարհին՝ կանգնեցնել Թամանյանի սիրտը» (135, Դ): Մի այլ նախադասությունում Այվազյանը նկարագրում է հայկական բնաշխարհն ու նրանում ապրող հային բազմակի ենթականերով եւ ուղիղ խնդիրներով. «Յուրաքանչյուր ցողուն, յուրաքանչյուր ցող, յուրաքանչյուր բլուր, յուրաքանչյուր լեռ, յուրաքանչյուր հովիտ իր լույսն էր մտնում ընդհանուր մեջ: Եւ այդ ընդհանուրը դարեր շարունակ կազմավորել էր հայի բնավորությունը, նրա կեցվածքը, նրա կարծրությունը» (73, Դ): Բազմակի տեղի պարագաներով Այվազյանը ցույց է տվել Ալեքսանդր Թամանյանի՝ ճարտարապետական կառույցների վերականգնողական գործունեությունը. «Զիավոր Թամանյանին տեսնում էին ոչ միայն Էջմիածնի եկեղեցիների, Զվարթնոցի ավերակների, Օշականի հնությունների մոտ, այլ նաեւ Նայասարանի ամենամասնական վայրերում» (72, Դ):

Այվազյանի սպեղծագործություններում որոշակի թիվ են կազմում փոքրիվ անդամներով նախադասությունները, որոնք խոսքին շարադասական բազմերեւոյություն են հաղորդել: Բայց բանի որ փոքրումը հիմնականում գրավոր արքահայրություն ունի, այսինքն՝ բնորոշ է բանավոր՝ խոսակցական լեզվին, այդ պարճառով գործածվել է հեղինակի խոսքում, ընդ որում նկատելի է, որ հեղինակը շարահյուսական այս իրողությանը դիմել է՝ խուսափելու համար երկրորդական նախադասությունների անհարկի կիրառությունից՝ հեղափոխելով խոսակցական խոսքին:

Նույնը կարող ենք ասել նաեւ թերի՝ գեղջված անդամով նախադասությունների մասին: Այսպիսի նախադասությունները գործածվում են հիմնականում երկխոսության մեջ, այդ պարճառով էլ թերի նախադասություններով հարուստ են պիեսները: Այսպեղ մեծ մասամբ գործածվել են այնպիսի թերի նախադասություններ, որոնք առանձին վերցրած, ձեռի, կառուցվածքի տեսակետից նախադասության տեսք չունեն, օրինակ՝

-Երկվորյակներ են:

-Աղջիկ, փղա: (54, Կթ)⁴

-Իսկ Պերրոսը չի հարցնում՝ ո՞ր է:

-Ո՛վ:

-Մառան:

-Չէ: /54, Կթ/

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գեղջված՝ միայն մեկ բառից բաղկացած նախադասությունը խոսակցի հարցական նախադասության հարցման տակ եղող անդամի պարասխանն է: Ենթակայի եւ ստորոգյալի ամբողջական կամ մասնակի գեղջումը հայե-

4 Տե՛ս Ա. Այվազյան, Թարրոն, Կրեւսի թագավորությունը, Եր., 1999: Այսուհետ այսպեղից մեջբերումները կնշվեն տեղում:

րենում սովորական երևույթ է եւ բնորոշ է հայրկապես լեզվի խոսակցական պարբերակին, քանի որ «Լեզուն միշտ ձգտում է սեղմության, եւ այդ պրոցեսի շնորհիվ նախադասության մեջ չի գործածվում այն, ինչ որ առանց գործածվելու հասկանալի է, ինչի գործածության անհրաժեշտություն չկա»⁵: Սովորաբար ենթական չի գործածվում, երբ սպորոգյալն արտահայտվում է դիմավոր բայով՝ «Մերժում է այդ հիմքը» /137, Դ/, «Նմա էլ նոր մայրաքաղաքներ պիտի կառուցենք» /72, Դ/: Սպորոգյալը գեղջվում ամբողջությամբ, երբ կից կամ բարդ նախադասության առաջին բաղադրիչում արդեն գործածվել է՝ «Մա պիտի լինե՞ր անկախության առաջին եկամբությունը, Նայասպան երկրի Նարությունը պեղական երկարապեւ մեռելությունից» (55-56, Դ): Իսկ այն դեպքում, երբ նախադասության մեջ գործածվում են պարբեր բառերով արտահայտված սպորոգյալներ, սպորոգյալի ամբողջական գեղջում հնարավոր չէ, միայն օժանդակ բայն է գեղջվել կամ հանգույցը՝ «Ժամանակները խառն են, վրանգներով լի» (100, Դ), «Յովանը մեզ գվարչացնելու համար կարակում էր, ծիծաղելի երգեր երգում» (123, Ձի):

Այվազյանի սրեղծագործությունների նախադասության կառուցվածքը բնականաբար է դառնում, որ ամենասովորականն ու ամենաբնորոշը ենթակա-սպորոգյալ ունեցող կամ այսպես կոչված երկկազմ նախադասությունն է: Միակազմ նախադասությունները, որոնք չունեն երկբևեռ կամ երկկազմ կառուցվածք, չնչին քանակ են կազմում, այն էլ հիմնականում անվանական անդեմ նախադասություններն են, որոնց «...հիմքում ընկած է առարկայի եւ նրա անվանման հարաբերությունը, առարկան հանդես է գալիս որպես անմիջականորեն քրված իրական ենթակա, անվանումը՝ որպես սպորոգելի. շնորհիվ հարաբերության անմիջականության՝ սպորոգումը բառախմաստային հայտնի արտահայտություն չի ստանում»⁶:

Անվանական անդեմ նախադասությունները գործածվել են հայրկապես «պոեմ վասն շենքի եւ շինության վիպակում»: Ուշագրավ է, որ այսպիսի յուրաքանչյուր գրույն սկսվում է այդպիսի նախադասությամբ՝ «Անի: 1064 թ.: Մայիսի 2» (98, Դ): Այսպիսի նախադասություններով հեղինակը դիմել է մի յուրահայտ ոճական հնարանի. աշխարհագրական անունների ընդգրկմամբ ցույց է տվել ոչ միայն կարարվելիք դեպքերի վայրը, այլ նաեւ նախապես հայտնում է այն թեման, ինչի մասին խոսվելու է: Այսպես՝ եթե ենթավերնագրում նշված է Արեւմտյան Նայասպանի որեւէ քաղաք կամ տեղանուն, ուրեմն խոսվելու է թուրքական վայրագությունների մասին, իսկ եթե Արեւելյան Նայասպանի կամ Ռուսաստանի քաղաքներից է նշվում, ապա խոսվելու է Ալեքսանդր Թամանյանի մասին, օրինակ՝ «Դեպրերորդ: 1900 թվական» (11, Դ): «Արեւմտյան Նայասպան: Օձնի: 1890 թվական» (7, Դ):

Սակավ են գործածվել նաեւ անենթակա նախադասությունները, որոնք լինելով ժողովրդական լեզվամրածողության կառույցներ՝ խոսքին հաղորդել են ժողովրդախոսակցական ոճի երանգներ, օրինակ՝ «Լուսանում էր» (52, Փախուստ): «Ճպոռտ լուսաբաց էր» (82, Դ), «Աստված իմ...քեզ հեք մրցել անհնար է» (64, Դ):

Սրան հակառակ բայական անդեմ նախադասությունները ժողովրդական խոսքին խորթ՝ գրական երևույթներ են եւ ամենասակավ գործածությունն ունեն՝ արտահայտելով հրաման կամ որոշում, օրինակ՝ «Դիմակայել, տոկալ, համբերել եւ աշխատել...Օր ու գիշեր

5 «Ժամանակակից հայոց լեզու», ՆՍԳԱ, հ. 3, էջ 456:

6 Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի պետության հիմունքները, Եր., 1974, էջ 405-406:

անընդհատ աշխատել՝ ուշադրություն չդարձնելով սեփական դիվանդանների սաղարանքներին, ամեն անկյունները սողոսկող ճղճիմ, անհեռափես դիպավորություններին, և չընկճվել, չչոքել դրսի թշնամու հարվածների փակ...» (131, Դ): «Ունենալ Նայասարան» (132, Դ):

Այվազյանի սրեղծագործության նախադասությունների կառուցվածքը քննելիս կարևորվում է պարզ և բարդ նախադասությունների հարաբերակցությունը: Այս երկու կառույցի նախադասությունները ունեն իրենց բնորոշ գծերը, առավելությունները, ոճական դրսևորման իրենց բնորոշ հնարավորությունները: Բարդ նախադասությամբ նպատակահարմար է ներկայացնել իրականության համապարփակ՝ ընդլայնված նկարագիրը, քանի որ նման նախադասությունների առաքությունը արտասանության երկարաձգմամբ և հնչերանգային ելուչներով ճարտասանական ու էպիկական շունչ է հաղորդում խոսքին, սակայն շարահյուսական այդ աստիճանավորումներն ու ստորադասությունը թուլացնում են խոսքի ներգործությունը: Պարզ նախադասություններն առավել հակված են դեպի խոդովողախոսակցական լեզուն, և նրանց իմաստային ներգործությունն ավելի ուժեղ է ու հստակ, քանի որ նման նախադասությունները գուրկ են բարդին բնորոշ աստիճանավորումներից և հնչերանգային ելուչներից: Սակայն հարկ է նշել, որ պարզ և բարդ նախադասությունների ոճական այս տարբերությունները ինչ-որ առումով պայմանական են, և միայն գրողի տաղանդն ու լեզվամշակութային են վճռում ամեն ինչ:

Ա. Այվազյանի սրեղծագործություններում մեծ տեղ են զբաղում բարդ նախադասությունները, որոնք խոսքի համակարգում ունեն ոճական միանգամայն փայրեր գործառնություններ: Նամադասական նախադասության կառույցն ավելի շատ ընդհանրություններ ունենալով պարզ նախադասության կառույցների հետ՝ դրանց նման խոսք է բերում ոճի պարզություն, իսկ ստորադասական նախադասությունները, քանի որ ծառայում են հասկացությունների ծավալման գործընթացին, հանդես են գալիս ավելի փայտղունակ բնույթի խոսքերում:

Բարդ համադասական նախադասությունները գործածվել են հարկապես հեղինակային խոսքում: Դա վկայում է այն մասին, որ հեղինակն ինքն է տալիս երևույթների, նկարագրությունների գնահատականները: Սրանով պայմանավորված՝ պատահում են և՛ երկբաղադրյալներ, և՛ բազմաբաղադրյալ (մինչև յոթ բաղադրյալ) նախադասություններ, այլ կերպ ասած՝ բաց կառույցի⁷ նախադասություններ, որոնք իրենց կազմում կարող են ընդունել տարբեր քանակի բաղադրիչ նախադասություններ, օրինակ՝ «Ուշ երեկոները և գիշերները դուրս են գալիս այդ ձայները, պարփում են բակում, լվացվում են ծորակի փակ, ու բակում լավում է շշուկ, խշշոց, ու բակը շունչ է առնում նորից» (34, Թ):

Նամադասական նախադասությունների բաղադրիչների զգալի մասը կապակցված են շարահարությամբ՝ առանց շաղկապների, օրինակ՝ «Ծխակոյով հայերը՝ ծերեր, կանայք, երեխաներ, խեղդվում էին հագից, սեղմվում էին իրար, ոմանք հպվում էին որմին՝ քարից մի պուր օդ քամելու մղումով» (35, Դ): Պատահում է նաև մասնակի շարահարական կապակցություն, երբ բաղադրիչների մի մասը կապվում է շարահարությամբ, մյուսը՝ շաղկապով, օրինակ՝ «Տերերը փոքրիկ կավե գավաթով գինի խմեց, փարաջայի փեշով սրբեց շուրթերը և, կանգնելով նորապսակների գլխավերևը, սկսեց իր օրհնանքը կարդալ» (28, Դ):

Նամադասական նախադասությունների կապակցման միջոցները քննելիս կարևոր է

7 «Ժամանակակից հայոց լեզու», ՏՄԳԱ, հ. 3, էջ 560-561:

միավորիչ՝ **և**, ու շաղկապների ռճական դերն ու հեղինակային նախընտրությունը: Քանի որ **և** շաղկապը գրական, գրքային բնույթ ունի, գործածվել է հեղինակային նկարագրություններում. «Քաջագնդունու համար Նայաստանը նոր էր ծնվում, և նորածնին դայակ էր հարկավոր, ոչ թե իշխանավոր» (35, Դ): Սրան հակառակ ռճական երանգավորում գործածության այլ բնույթ ունի **ու**-ն, որը չնայած երբեմն գործածվել է նաև հեղինակային խոսքում, բայց այս դեպքում նույնպես ունի ընդգծված ժողովրդական երանգ՝ «Նայրը բացեց բողջան, հաց ու պանիր հանեց ու կիսապ մսորով նայեց որդուն» (20, Դ):

Նույն սկզբունքով առաջնորդվելով՝ կարող ենք գտնագրել հակադրական **բայց, իսկ, սակայն** շաղկապների կիրառության ոլորտները, ընդ որում ակնհայտ է, որ հոմանշային շարք կազմող այս շաղկապները ունեն ռճական առանձնահատուկ դրսևորում, այսինքն՝ **բայց**-ն ու **իսկ**-ը ժողովրդական երանգավորում ունեն և դրանով պայմանավորված՝ գործածվել են հիմնականում հերոսների ուղղակի խոսքում, մինչդեռ **սակայն**-ը ոչ միայն գրական է, այլ երբեմն նաև վերամբարձ: Չնայած սրան, չի կարելի անվերապահորեն պնդել, որ հեղինակն իր խոսքում օգտագործել է **սակայն**-ը, իսկ հերոսների խոսքում՝ **բայց**-ն ու **իսկ**-ը, այնուամենայնիվ փաստ է նաև այն, որ ոչ մի հերոս, թե՛ պիեսներում, թե՛ պարամվածքներում ու վիպակում **սակայն** շաղկապը չի գործածել իբրև համադասության կապակցման միջոց:

Բարդ համադասական նախադասություններով փրոնական հարաբերությունն արտահայտվել է կամ...կամ կրկնադիր շաղկապով: Նարկանշական է այսպիսի նախադասությունների հաճախակի կիրառումը բոլոր ժանրերում.՝ «Իսկ գնացք կան բեռնափար էր կան գալիս էր հակառակ կողմից» (82, Դ), «Կան երգի մեջ է, կան սրանք աննորմալներ են» (42, Կթ): Սակայն պետք է նկատել, որ բարդ համադասական նախադասությունների համակարգում ամենահաճախ գործածվում են այն նախադասությունները, որոնցում առկա են փոքրեր հարաբերություններ, օրինակ՝ «Դերերբուրգ լսելով՝ Թամանյանը աչք ածեց օրիորդներին. ծանոթ չէին, բայց այս ամբողջ ընթացքում նրանք արյունակցի մոտիվություն էին ներշնչում» (62, Դ), «Այսպես մտածեց Աբգարը և դուրս եկավ իր ծպրյալ վիճակից, սակայն Նովիանին անունից չհրաժարվեց» (125, Դ):

Այվազյանի սրբեղծագործություններում հերոսների ուղղակի խոսքը, գրույցը, սովորական ոչ պաշտոնական հաղորդակցումը մարերի բարդ շարահյուսական կառույցներով արտահայտվելու պահանջ չի ներկայացնում: Թեև այսպիսի խոսքերին խորթ չեն ստորադասական կառույցները, սակայն դրանք սովորաբար չեն անցնում մեկ-երկու աստիճանից այն կողմ: Ա. Այվազյանի սրբեղծագործություններում հանդիպում են ամենափոքրեր հարաբերությամբ երկրորդական նախադասություններով բարդ ստորադասական նախադասություններ: Սակայն հեղինակը շատ դեպքերում նախընտրությունը փոխել է անշաղկապ՝ շարահարական կապակցությանը, օրինակ՝ «Ես սիրում եմ սպիտակը. մաքուր է» (6, Դ), «Մայիսը քիթը կախեց. պետք եղած փողը թուրք համբերել կարող է» (41, Դ):

Արձակ ժանրի սրբեղծագործություններում հաճախակի գործածված կառույցներից է բազմաբարդ նախադասությունը, որով հեղինակն արտահայտել է իր միտքն ավելի համակողմանի և ընդարձակ: Ընդ որում այսպիսի նախադասությունների կազմում ընդգրկված բաղադրիչների քանակը փոքրեր է՝ պայմանավորված խոսքային փոխալ իրավիճակով և հեղինակի նախընտրությամբ: Թեև այսպիսի կառույցի նախադասությունների անհարկի

կիրառումը խճողում է խոսքը, սակայն Այվազյանի արձակում պահպանված է չափի զգացողությունը: Ճիշտ է, հանդիպում են երկարաշունչ՝ յոթ-ութ բաղադրիչ ունեցող նախադասություններ, բայց դրանք ընդհանրական բնույթ չունեն: Ավելի հաճախ գործածվել են համաստրադասությունը, ենթաստրադասությունն ու փարաստրադասությունը: Շարք հաճախ հեղինակն ինքն է կերպել բազմաբարդ նախադասության յուրաքանչյուր կառույց, օրինակ՝ «Ե՛ւ բարեկամներն էին խորհուրդ տվել, եւ՛ ինքն էր որոշել, որ այլևս թերթ չի կարդալու, այնուամենայնիվ չգիմացավ հակառակի գայթակղությանը, գնեց թերթ, առանց բացելու դրեց գրպանը՝ իր հեղափոխության հետ մեկտեղ, թե արդյոք այսօրվա համարում Թամանյան անունը նորեն հայտնվելու է» (139, Դ):

Այսպիսով, Աղասի Այվազյանի սրելոծագործությունների կառուցվածքի բնությունն ընդհանուր առմամբ բացահայտում է նրա ողջ սրելոծագործության, ինչպես նաև նրա հեղինակային անհատական ոճին բնորոշ առանձնահատկությունները: Այսպես չկա վերաբարձ-փոխ խոսքի որևէ նշույլ, առարկաներն ու երևույթները կոչված են իրենց անուններով: Նեղինակը ձգտել է ըստ հնարավորին կոնկրետ արտահայտել իր միտքը՝ աշխատելով, որ այդ կոնկրետությունն ու սեղմությունը չանդրադառնան նաև լեզվի վրա՝ նրան չոր ու ցամաք երանգ հաղորդելու խմսաբով: Ա. Այվազյանի լեզվի պարզությունը մեծապես պայմանավորված է իր երկերի բառապաշարով և խոսքի շարահյուսական կառուցվածքով: Նեղինակը գերազանցապես օգտագործում է գրական հայերենի բառազանձը՝ պարզ ու մաքուր, կոնկրետ ու առարկայական, գերծ երկարաշունչ բառերից ու բառաձևերից: Չհաշված հայտնիկ բացառությունները, հազիվ թե գտնվի մի բառ, որ հասկանալի չլինի յուրաքանչյուր հայի, իսկ դա մեծապես նպաստում է սրելոծագործության ժողովրդայնությանը: Շարք հազվադեպ գործածված ժողովրդախոսակցական և բարբառային բառերն ու օտարաբանությունները գործածվել են հերոսների անհատականացման նպատակով: Նույն խնդրին են ծառայել նաև կոպիտ ու գոնիկ բառերն ու արտահայտությունները, սակայն սրանց գործածությունն էլ խիստ սահմանափակ է: Այս ամենով հանդերձ՝ Այվազյանը կերպել է նաև նոր բառեր, որոնք տվյալ իրավիճակում առավել դիպուկ են դարձրել իր խոսքը: Այդ նորաբանությունները կերպելով մեր լեզվին բնորոշ բառակազմական եղանակներով՝ բառաբարդումով ու ածանցումով, նա ապահովել է նաև այդ բառերի հասկանալիությունն ու փարածումը:

Նախադասության կառուցվածքի հարցում Այվազյանի սրելոծագործություններն ըստ ժանրային փոքրերակման ունեն իրենց առանձնահատկությունները: Իհարկե հեղինակն ազատ է իր սրելոծագործություններում գործածելու այս կամ այն կառույցի նախադասությունը, բայց ամեն դեպքում վճռորոշ դեր է կատարում նաև սրելոծագործության ժանրը: Իր պատմվածները հեղինակը շարադրել է իմաստով և պարզ ընդարձակ նախադասություններով: Եւ ընդհանրապես այս ժանրի սրելոծագործություններն այնքան սեղմ են գրված, որ դժվար է գտնել մի բառ, որը կարելի լիներ հանել՝ առանց խաթարելու մտքի ճկունությունը: Պատմվածքների առանձնահատկություններից է նաև հերոսների ուղղակի խոսքի բացակայությունը. բացառությամբ մեկ-երկու դեպքերի, ամբողջ պատմվածքը պատմում է հեղինակը կամ նրա կողմից ընկրված հերոսը: Սակայն երկու դեպքում էլ պատմությունը շարադրվում է պարզ նախադասությամբ: Թե՛ հեղինակը, թե՛ ընկրած հերոսը հանդես են

գալիս սոսկ պարմողի դերում՝ առանց արտահայտելու իրենց կարծիքը: Բարդ նախադասությունները հեղինակը գործածում է հիմնականում նկարագրելու համար այն միջավայրը, ուր ապրում են իր հերոսները, և դրանք ավելի սակավ են գործածված:

Նույնը չի կարելի ասել վիպակի մասին: Այսպես չենք կարող շեշտել նախադասության այս կամ այն կառույցը, քանի որ եւ՛ պարզ, եւ՛ բարդ նախադասությունները գործածվել են գրեթե հավասար հաճախականությամբ: Սակավ են հանդիպում պարզ համառոտ նախադասությունները, այն էլ հիմնականում ուղղակի խոսքի, հարց ու պարասխանի դեպքում: Թեքի՝ բառ նախադասությունները նույնպես քիչ են, չնայած վիպակում երկխոսություններ շար կան: Սակայն դրանք ոչ թե հարց ու պարասխաններ են, այլ զրույցներ, կարծիքների փոխանակումներ, որոց դեպքում այդպիսի նախադասությունների կիրառման անհրաժեշտություն չկա: Գալով միակազմ նախադասություններին՝ պետք է ասել, որ բացի ռճական հատուկ նպատակ հետապնդող անվանական անդեմ նախադասություններից, շատ քիչ են գործածվել բայական անդեմ և աններթակա նախադասությունները: Ընդհանուր առմամբ Այվազյանին բնորոշ է միակազմ նախադասությունների գործածում: Բարդ նախադասություններից հեղինակը նախապաշարվածությունը ցուցն է համադասությանը և այն էլ անշաղկապ՝ շարահարական կիրառությանը: Ստորադասական նախադասությունների դեպքում դարձյալ նկատվում է հարաբերյալների՝ իբրեւ բաղադրիչ նախադասությունների կապակցման միջոցի սակավ գոյծածություն: Այվազյանին բնորոշ է նաեւ բազմաբարդ կառուցվածքի նախադասությունների օգտագործում հեղինակային դարձություններում ու միջամտություններում:

Նախադասության կառուցվածքի տեսակետից խիստ փառքերվում են պիեսները, և դա բնական է, քանի որ այսպես երկխոսություն է: Դրանով է պայմանավորված թերի նախադասությունների առաջնությունը, պարզ համառոտ նախադասությունների հաճախակի գործածությունը և սրանց հակառակ՝ բարդ նախադասությունների նվազագույն կիրառությունը: